



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1190-Ա/2

«09» սեպտեմբերի, 2020 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ
ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերագինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2020 թվականի սեպտեմբերի 9-ի N 1190-Ա/2 հրամանի:

1.2. Մրցույթի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, գիտական և գիտատեխնիկական գործունեության համապատասխան բնագավառներով և մասնագիտություններով (Հավելված N 2.1-ում): Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) գիտական հետազոտությունների իրականացման համար 12 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) կառուցվածքային նվազագույն գիտական միավորի (խումբ, լաբորատորիա, բաժին, կենտրոն) (այսուհետ՝ Ստորաբաժանում) ղեկավարի (այսուհետ՝ Խմբի ղեկավար) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված թեմաներին:

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- Խմբի ղեկավարի (Ստորաբաժանման ղեկավարի) կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն,

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- **Խմբի ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list,**

<https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն:

1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.5. Թեմայի ավարտից հետո (12 ամիս հետո) Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Նախարարի հրամանով ձևավորվող մասնագիտական փորձագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.6. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:

1.7. Մշտադիտարկման արդյունքները Խորհուրդը պետք է հաշվի առնի՝ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալուց:

1.8. Հաշվետվության վերաբերյալ Խորհրդի կողմից բացասական եզրակացության պարագայում, հետագայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին ներկայացվելիք հայտերի փորձագիտական գնահատականից կհանվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում: Հետագա մրցույթներին փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո Կոմիտե ներկայացվող ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին Խորհրդի եզրակացության հիման վրա:

1.9. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անտազիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով հանդիսանում է Կազմակերպության հաստատված Ստորաբաժանման ղեկավար:

2.2. Խմբի ղեկավարը, վերջին 5 տարիների ընթացքում, գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում պետք է ներկայացնի.

2.2.1. Հավելված N 2.1-ի 1-ին մասում ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն երկու գիտական հոդված՝ ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող (ըստ «*Institute for Scientific Information (ISI JCR)*»-ի տվյալների) ամսագրերում,

- կամ չորս գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («*Science Citation Index Expanded (SCIE)*», (*Book Citation Index*) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում կամ «*Scimago Journal & Country Ranking (SJR)*») ընդգրկված ամսագրերում:

2.2.2. Հավելված N 2.1-ի 2-րդ մասում ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն մեկ գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («*Science Citation Index Expanded (SCIE)*», (*Book Citation Index*) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում կամ «*Scimago Journal & Country Ranking (SJR)*») ընդգրկված ամսագրերում:

2.3. Ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 50 տոկոսը պետք է լինեն 1970 թվականի հունվարի 1-ից հետո ծնված կամ առնվազն 25 տոկոսը պետք է լինեն 1985 թվականի հունվարի 1-ից հետո ծնված:

2.4. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորման երաշխավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների կամ գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների ղեկավարները:

2.5. Ստորաբաժանման աշխատակիցները վերջին 5 տարիների ընթացքում հանրագումարում չպետք է ղեկավարած լինեն Կոմիտեի կողմից ֆինանսավորման երաշխավորված 3 և ավելի գիտական թեմաներ, բացառությամբ՝ ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին, այդ թվում՝ երիտասարդ

գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթների:

2.6. Ստորաբաժանումում առկա կամ գնվելիք սարքի հետ աշխատելու նպատակով վերապատրաստման կարող է մեկնել Ստորաբաժանման այն աշխատակիցը, ով ծնվել է 1975 թվականի հունվարի 1-ից հետո:

3. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

3.1. Թեմայի իրականացման վայր հանդիսացող Կազմակերպությունը պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր:

3.2. Թեմայի ղեկավարը մինչև 2020 թվականի հոկտեմբերի 16-ը ներառյալ պետք է Կազմակերպության պաշտոնական գրությունը ներկայացնի Կոմիտե՝ նշելով Ստորաբաժանման վերազինման կարևորությունը և Կազմակերպության հետագա զարգացման մեջ դրա դերը, ինչպես նաև Ստորաբաժանման ամբողջական հաստիքացուցակը՝ համաձայն Հավելված N 2.3-ի և սարք/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող կամ վերապատրաստվող մասնագետների առկայության մասին տեղեկություններ (եթե այդպիսիք կան)՝ համաձայն Հավելված N 2.4-ի:

3.3. Թեմայի իրականացման համար անհրաժեշտ սարքերը և նյութերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան և ձեռք բերված սարքերի ու սարքավորումների տնօրինման իրավունքը պատկանում է Կազմակերպությանը՝ հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

4. Հայտի լրացման և ներկայացման կարգը

4.1. Հայտը լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

4.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.2),

- Համակարգում (grants.scs.am) ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- Կազմակերպության պաշտոնական գրությունը,
- Ստորաբաժանման հաստիքացուցակը (Հավելված N 2.3),
- սարք/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող կամ վերապատրաստվող մասնագետների առկայության մասին տեղեկություններ (Հավելված N 2.4):

4.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 16-ը ներառյալ:

4.4. Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը նախատեսել մինչև 20000.0 հազար ՀՀ դրամ:

4.5. Ստորաբաժանման աշխատակիցների համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

4.6. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքերի և սարքավորումների ծախսեր, հետազոտությունների նպատակով օգտագործվող նյութերի ձեռքբերման ծախսեր:

4.7. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքերի վերանորոգում կամ արդիականացում» ենթահոդվածով կարող է նախատեսվել սարքերի և սարքավորումների վերանորոգման կամ արդիականացման ծախսեր:

4.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերապատրաստումներ» ենթահոդվածով կարող են նախատեսվել վերապատրաստումներ՝ Ստորաբաժանումում առկա ժամանակակից սարքերի հետ աշխատելու համար: Վերապատրաստումների գումարը չպետք է գերազանցի Նախահաշվի 10 տոկոսը:

4.9. Նախահաշվի բոլոր ծախսերը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

4.10. Վերապատրաստումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավել՝ քան ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ օրապահիկի համար ոչ ավել քան ամսական 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ստորաբաժանման անդամի օտարերկրյա

վերապատրաստումների ընդհանուր տևողությունը, ըստ նախահաշվի, չպետք է գերազանցի երկու ամիսը:

4.11. Վերադիր ծախսերը (12 ամսվա համար) չպետք է գերազանցեն 500.0 հազար ՀՀ դրամը:

5. Հայտերի գիտական փորձաքննությունը

5.1. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են դրանց գնահատման նպատակով ձևավորված Խորհրդին՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

5.2. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են տվյալ սարքերի և նյութերի անհրաժեշտությունը Ստորաբաժանման գիտական և գիտատեխնիկական գործունեության համար, Թեմայի արդի վիճակը, կիրառական բնույթը, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, Նախահաշվի հիմնավորվածությունը, Խմբի ղեկավարի մասնագիտական որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 2.5), ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

5.3. Խորհուրդը Կոմիտեի հետ համատեղ մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության գնահատման թերթիկները:

5.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում Խորհրդում ներառված փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

5.5. Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

5.6. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետների գնահատականների հիման վրա Խորհրդի կողմից հաստատված կոնսենսուսային գնահատականն է:

5.7. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

5.8. Գիտական փորձաքննության ավարտից հետո Խորհուրդը Կոմիտեին է ներկայացնում իր կողմից հաստատված Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորված վարկանիշային ցանկը:

5.9. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նոր գիտական թեմաների, այդ թվում թիրախային (նպատակային) գիտական թեմաների ֆինանսավորում» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալներից, որոշում է շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

5.10. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

6. Այլ դրույթներ

6.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

6.2. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Կազմակերպության ղեկավարների միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր («Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական սպորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Մաս 1

Մաս 2

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.3 Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4 Քիմիա
- 1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6 Կենսաբանական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
- 4.2 Բուսաբուծություն
- 4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
- 4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻ

- 2.3 Մեխանիկա
- 2.5 Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6 Նյութագիտություն
- 2.7 Բժշկական սարքաշինություն
- 2.8 Էկոլոգիա
- 2.9 Կենսատեխնոլոգիա
- 2.10 Նանոտեխնոլոգիա

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻ

- 2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Ընդհանուր բժշկություն
- 3.2. Կլինիկական բժշկություն
- 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անունը հայրանունը)
_____ ից
(ազգանունը)
_____ (հասցեն)
_____ (հեռախոսահամարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անունը, ազգանունը)

«___» _____ 2020 թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն, մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Անոտագիա

2. Ստորաբաժանման գիտական ուղղությունների արդի վիճակի ամփոփ վերլուծություն

3. Ստորաբաժանման գիտական նպատակները և խնդիրները

4. Ստորաբաժանման վերագինման հիմնավորումը

5. Կիրառական հետազոտությունների որակի վրա ազդեցությունը

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)

7. Տվյալ ուղղությամբ Ստորաբաժանման ունեցած ձեռքբերումները (առկա նյութական ռեսուրսները)

8. Ստորաբաժանման զարգացման հեռանկարները (ռիսկեր և հնարավորություններ)

9. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մրավոր սեփականության փնտրիչում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

10. Օգտագործված գրականության ցանկը

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերագինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՍԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Անունը, հայրանունը, ազգանունը,	Պաշտոնը	Գիտական աստիճանը	Ծննդյան օր/ամիս/տարի	Հրամանագրման օր/ամիս/տարի	Անհատական կոդը*
1.						
2.						
3.						
4.						
5.						
6.						
7.						
8.						
9.						
10.						

Կազմակերպության ղեկավար՝

_____ (ստորագրություն)

_____ (անունը, ազգանունը)

Կ. Տ

* Անհատական կոդ՝ (grants.scs.am) կայքի անհատական էջի «Համակարգի կարգաբերումներ» բաժնից:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՐՔ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ներառված մասնագետների				
Անունը, հայրանունը, ազգանունը,	Պաշտոնը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը	
			Ժամանակահատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	2	3	4	5

Կազմակերպության ղեկավար՝ _____

(ստորագրություն)

_____ (անունը, ազգանունը)

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ **ԳԳԱՑ՝ E**) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) **Գիտական ամսագրերի հրապարակումների:** Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

0.2-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝

0.20՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI»,«ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,

0.05՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում: